

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2017թ. Փետրվարի 3-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 38-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվերակության դրեց օրակարգը, որը միաձայն ընդունվեց (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Գիտական հաղորդում (ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆ. Գ.Հարությունյան):

2. Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Վ.Օհանյանին դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու մրցույթին մասնակցության երաշխավորության հարց:

3. Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ պրոֆ. Ա.Վաղարշյան):

4. 2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների ամփոփում:

5. Պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները մագիստրոսական թեզերի (հեռակա ուսուցմամբ բաժնում) պաշտպանության ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

6. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՍԵՑԻՆ.** Գիտական հաղորդում (ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆ. Գ.Հարությունյան):

Զեկուցողն ընդհանուր գծերով ներկայացրեց «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի մշակման գործընթացը, սահմանադրական դատարանի կազմակերպման և գործունեության հետ կապված առավել արդիական խնդիրները, այդ ուղղությամբ նախագծում տեղ գտած կարգավորումները, դրանց վիճահարույց կողմերը, նախագծում տեղ գտած նոր ինստիտուտները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ. Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Վ.Օհանյանին դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու մրցույթին մասնակցության երաշխավորության հարց:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու համար ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն քվեարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Վ.Օհանյանին շնորհել դոցենտի գիտամանկավարժական կոչում:

3. ԼՍԵՑԻՆ. Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ պրոֆ. Ա.Վաղարշյան):

Պետության և իրավունքի տեսության ու պատմության իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Վաղարշյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում իր ղեկավարած ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ասիստենտ Տ.Սիմոնյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական: Միննույն ժամանակ առաջարկ հնչեցվեց առավել հետևողական լինել նոր կադրերի պատրաստման հարցում:

4. ԼՍԵՑԻՆ. 2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների ամփոփում:

Դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանն ընդհանուր գծերով ներկայացրեց 2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացիք հետ կապված հարցերը, քննաշրջանի արդյունքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը, դոց. Ա.Սարգսյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

5. ԼՍԵՑԻՆ. Պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները մագիստրոսական թեզերի (հեռակա ուսուցմամբ բաժնում) պաշտպանության ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

Պետական քննական հանձնաժողովների նախագահներն ամփոփ ձևով ներկայացրին մագիստրոսական թեզերի (հեռակա ուսուցմամբ բաժնում) պաշտպանության ընթացքը և արդյունքները, հանդես եկան գործընթացը բարելավելուն ուղղված առաջարկություններով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ն.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն: Ամբիոններին հանձնարարել՝

1. հետևողական լինել մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության հարցում.
2. ապահովել ղեկավարների հետքողական վերահսկողությունը մագիստրոսական թեզերի պատրաստման գործընթացի նկատմամբ.
3. ամբիոններում Կազմակերպել մագիստրոսական թեզերի նախապաշտպանություն և դրա արդյունքներով միայն թույլատրել մագիստրոսական թեզի պաշտպանությունը.
4. «Երևանի պետական համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգը» հաստատվելուց հետո մագիստրոսական թեզերի պատրաստումը և պաշտպանությունն իրականացնել այդ կարգով սահմանված պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով կոնկրետ մասնագիտության առանձնահատկությունները:

6. Ընթացիկ հարցեր

6.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկ. Արա Գաբուզյանի՝ «Հանցավոր վարքագծի մոտիվացիա» վերտառությամբ աշխատությունը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Սարգսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ.

դոկ. Արա Գաբուզյանի՝ «Հանցավոր վարքագծի մոտիվացիա» վերտառությամբ աշխատությունը երաշխավորել տպագրության:

6.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Վլադիմիր Վարդանյանի՝ «Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման իրավական հիմնախնդիրները» վերտառությամբ աշխատությունը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Սարգսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Վլադիմիր Վարդանյանի՝ «Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման իրավական հիմնախնդիրները» վերտառությամբ աշխատությունը երաշխավորել տպագրության:

6.3 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկ. Արա Գաբուզյանի՝ «Հանցավոր վարքագծի մոտիվացիա» վերտառությամբ աշխատությունը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Սարգսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկ. Արա Գաբուզյանի՝ «Հանցավոր վարքագծի մոտիվացիա» վերտառությամբ աշխատությունը երաշխավորել տպագրության:

6.4 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ֆակուլտետի շրջանավարտ Էդգար Կարապետյանին հայցորդ ձևակերպելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Բավարարել Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ Էդգար Կարապետյանին ամբիոնում հայցորդ ձևակերպելու մասին՝ հաշվի առնելով, որ Է.Կարապետյանը ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի շրջանավարտ է, ներկայումս աշխատում է որպես ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետի ավագ քննիչ, ունի տպագրված երկու գիտական հոդված:

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.5 ԼՄԵՑԻՆ. Քաղաքիական իրավունքի ամբիոնի ամբիոնի հայցորդ Կարինե Պողոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ Կարինե Պողոսյանի՝ «Ընդհանուր բաժնային սեփականության հարաբերությունների իրավական կարգավորումը ՀՀ օրենսդրությամբ» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03- «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Ա.Հայկյանցին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուջյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի հեռակա ուսուցման քաղաքացիական իրավունք և քաղաքացիական դատավարություն մագիստրոսական ծրագրի 2017 թվականի մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների

Ամփոփելով սույն թվականի հունվարի 30-31-ն ընկած ժամանակահատվածում Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի հեռակա ուսուցման քաղաքացիական իրավունք և քաղաքացիական դատավարություն մագիստրոսական ծրագրի 2017 թվականի մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացը՝ նախ ներկայացնում արձանագրված ցուցանիշները.

<i>Մագիստրոսական թեզ</i>	ուսանող	գերազանց	լավ	բավարար	անբավ.	չի ներկ.
<i>Քաղաքացիական իրավունք</i>	10	-	2	8	-	-
<i>Քաղաքացիական դատավարություն</i>	5	-	1	3	1	-

Ներկայացված ցուցանիշների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ հեռակա ուսուցման մագիստրոսների ընդհանուր մակարդակը միջին է. մագիստրոսներից միայն 3-ն է արժանացել լավ գնահատականի, 11-ը ստացել է բավարար, 1-ը՝ անբավարար: Դեռևս 2016 թվականի պետական քննությունների արդյունքների ամփոփման ժամանակ հատուկ ընդգծվել էր, որ հեռակա ուսուցման շրջանավարտները թե՛ իրենց որակով, և թե՛ պատրաստվածությամբ զգալիորեն զիջում էին առկա ուսուցման շրջանավարտներին: Նույնը հավասարապես վերաբերում է հեռակա ուսուցման մագիստրոսներին: Կարծում եմ՝ այս դեպքում խնդիրը պայմանավորված է ոչ միայն ուսանողների որակով, այլև ուսուցման գործընթացի կազմակերպման մի շարք թերացումներով, որոնցից առավել կարևորների վրա ցանկանում եմ հրավիրել Ձեր ուշադրությունը:

1) Ինչպես և նախորդ անգամ էի նշել, դարձյալ խնդրահարույց էին մագիստրոսական թեզերի թեմաները. դրանց մի մասը խիստ պարզունակ էր, մյուս մասը՝ բավականաչափ ուսումնասիրված և ոչ արդիական: Տպավորությունն այնպիսին է, որ ուսուցման գործընթացը հետ է մնացել արդի իրավական զարգացումներից: Մինչդեռ այսօր մեր պետությունը գտնվում է իրավական բարեփոխումների լուրջ փուլում և թեմաների ընտրությունը կարելի է կատարել՝ հաշվի առնելով տարբեր հայեցակարգերով և օրինագծերով բարձրացված խնդիրները, իսկ լավագույն դեպքում, հատկապես դատավարագետների պարագայում՝ դատական պրակտիկայի խնդրահարույց հարցերը:

2) Մտահոգիչ էին մագիստրոսական թեզերի եզրահանգումները: Որոշ աշխատանքներում կամ այդպիսիք բացակայում էին, կամ թեև առկա էին, սակայն չունեին որևէ գիտական նշանակություն կամ էլ արդեն իսկ շրջանառության մեջ դրված օրինագծերի դրույթների վերարտադրությունն էին՝ որպես սեփական եզրահանգումների, ինչը հատկապես ակնհայտ էր քաղաքացիական դատավարության գծով թեզերի պաշտպանության ժամանակ՝ հաշվի առնելով այն, որ շրջանառության մեջ է դրված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագիծը:

3) Գրականության ցանկերի խնդիրն այս դեպքում ևս արդիական էր: Հղումներում դեռևս գերակշռում էր բավականին հին հրատարակության գրականությունը, իսկ նորօրյա գիտական աշխատանքներին և հատկապես ամերիկյան կամ եվրոպական գրականությանը գրեթե

անդրադարձ չկար: Պրակտիկ նյութերի առումով ևս վիճակը նախանձելի չէր. մեծ մասամբ ուսումնասիրության առարկա էին դարձվել ՀՀ վճռաբեկ դատարանի ավելի վաղ շրջանի որոշումները (2008-2010թ.թ.) այն դեպքում, երբ առանցքային նախադեպային նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումներ ՀՀ վճռաբեկ դատարանը քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության գծով արտահայտել է հիմնականում վերջին երկու-երեք տարիների ընթացքում կայացված որոշումներում: Հաշվի առնելով հատկապես քաղաքացիական դատավարության գծով ընտրված թեմաները՝ գտնում եմ, որ գոնե այդ մասնագիտացմամբ մագիստրոսական թեզերի շրջանակներում պետք է ուսումնասիրվեին ՀՀ վճռաբեկ դատարանի վերջին շրջանի որոշումները: Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների ուսումնասիրությանը, ապա այդպիսիք գրեթե բացակայում էին:

4) Հաջորդ խնդիրը, որն իսկապես մտահոգիչ էր, վերաբերում է մագիստրոսների՝ զեկուցումով հանդես գալու ունակությանը: Ապագա իրավաբանի համար կարևոր նշանակություն ունի բանավոր իրավական խոսքին տիրապետելու կարողությունը, որը սակայն, հեռակա ուսուցման մագիստրոսների մոտ բավականին ցածր մակարդակի վրա էր: Կարծում եմ այս ուսուցման մագիստրոսներն իրենց ուսումնառության ընթացքում պետք է պարտադիր, առնվազն մեկ անգամ գիտական զեկույց պատրաստեն և հանդես գան համապատասխան զեկուցումով ֆակուլտետում անցկացվող գիտական միջոցառումների շրջանակներում: Կամ եթե անց են կացվում մագիստրոսական թեզերի նախապաշտպանություններ, ապա անհրաժեշտ է ավելի մեծ պատասխանատվությամբ մոտենալ այդ գործընթացին, ինչը կնպաստի բանավոր խոսքի հղկմանը:

Բարձրացված խնդիրների լուծումը, կարծում եմ, հիմնականում վերաբերում է ամբիոնների և գիտական ղեկավարների աշխատանքին: Գիտական ղեկավարները պետք է առավել հետևողական լինեն, հնարավորինս խիստ վերահսկողություն սահմանեն թեզերի պատրաստման գործընթացի նկատմամբ, իսկ ամբիոնները չթույլատրեն սահմանված չափանիշներին չհամապատասխանող աշխատանքների պաշտպանությունը: Անդրադառնալով գրախոսողների աշխատանքին՝ նշեմ, որ վերջիններիս կողմից տրված կարծիքները, ըստ էության, համապատասխանում էին աշխատանքի որակին. միակ նկատառումը, թերևս, այն է, որ անհասկանալի էր բազմաթիվ թերությունների վկայակոչման պարագայում՝ «հաջող պաշտպանության դեպքում՝ դրական գնահատականի հավակնելու վերաբերյալ» գրախոսողի վերջնական եզրահանգումը:

Այս ամենով հանդերձ՝ պետք է նշեմ, որ մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացն ընդհանուր առմամբ անցել է բնականոն քննական մթնոլորտում, իսկ բարձրացված հարցադրումները բացառապես նպատակաուղղված են գործընթացի հետագա արդյունավետության բարձրացմանը:

Պետական քննական հանձնաժողովի նախագահ

Ե. Խունդկարյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի շրջանավարտների Պետական քննությունների արդյունքների

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունք և քրեական դատավարություն մասնագիտացմամբ 2017 թվականի պետական քննությունները և դրանց արդյունքները վկայում են շրջանավարտների ոչ պատշաճ պատրաստվածության մասին: Մասնավորապես, ասվածի հիմնավորում են հանդիսանում ստորև բերված ցուցանիշները:

Քրեական իրավունք	ուսանող	գերազանց	լավ	բավարար	Անբավ.	Չի ներկ.
Մագիստրոսական թեզ						
հեռակա	19	2	9	8	-	-
Քրեական դատավարություն						
Մագիստրոսական թեզ						
հեռակա	17	-	11	6	-	-

Աշխատանքների ներկայացման ընթացքում հանգել են այն եզրակացության, որ բավարար խորությամբ չէին ուսումնասիրվել հեղինակների կողմից ընտրված թեմաները, աշխատանքներում նկատվում էր գիտականության ցածր աստիճան:

Աշխատանքները գրախոսողների կողմից գրախոսականների ներկայացման ընթացքում նշվում էին բազմաթիվ թերություններ, սակայն դրա հետ մեկտեղ, վերջիններս հանգում էին այն եզրակացության, որ իրենց կողմից նշված թերությունները չեն նսեմացնում աշխատանքի արժեքը և դրանք արժանի են պաշտպանության, իսկ հեղինակներն էլ բարձր գնահատականի: Հետևաբար, հաշվի առնելով գրախոսականներում վեր հանված թերությունները, գտնում են, որ դրանց բովանդակությունը չէր համապատասխանում գրախոսականների եզրակացությանը:

Կարծում են՝ հարկ է հետազայում հետևյալ հարցադրումների վրա ուշադրություն դարձնել՝

Նախ մտահոգող էր առանձին թեզերում պրակտիկ նյութի պակասը, իսկ առանձին դեպքերում՝ բացակայությունը: Պրակտիկ նյութի վերլուծությունը

հնարավորություն կտար հեղինակներին ավելի խորը հետազոտություն կատարել, ցույց տալ, թե իրենց կողմից առաջարկվող լուծումները ինչպիսի նշանակություն կունենան առկա խնդիրների լուծման գործում: Հետևաբար պրակտիկ նյութի առակայությունը կբարձրացնէր աշխատանքների արժեքը և կխորացնէր կատարված ուսումնասիրությունը:

Կարծում եմ՝ լուրջ քննարկման նյութ պետք է դառնա արտագրությունները բացառելու հարցը: Ճիշտ է, կարծում եմ, հանձնաժողովը անհանգստանալու լուրջ հիմքեր չի ունեցել, սակայն խնդիրն ինքնին մտահոգ է: Հետևաբար, աշխատանքների ղեկավարները պետք է ուշադիր լինեն, և թեզերի տեքստից բացառեն արտագրությունները:

Եզրակացնելով նշեմ, որ աշխատանքների ղեկավարները հետագայում պետք է ավելի հետևողական լինեն, որպեսզի մյուս տարիներին ներկայացվող աշխատանքները լինեն խորությամբ ուսումնասիրված, դրանցում արվող առաջարկները գիտականորեն հիմնավորված, իսկ հեղինակների կողմից ընտրված թեմաները համապատասխանեն դրանց բովանդակությանը:

Պ ե տ ա կ ա ն ք ն ն ա կ ա ն հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի ն ա խ ա գ ա հ Դ. Մելքոնյան